

— Կ'ուզէի ըսել պէտք է միշտ վարժութիւն ընես չյոգնելու համար:

— Ես ամէն օր վարժութիւն կ'ընեմ: Այս պա տան իբր եւ երիտասարդքը միայն զուարճութեանս համար չեմ պահէր, այլ իրենց մարզարանն է այս սենեակը. վա՛յ անոր, որ իր մարզից մէջ թոյլ գտնուի, նայէ՛, տե՛ս սա խարազանները զէնքերու քով կախուած, առանց արեամբ ներկուելու տեղերնին չեն դառնար: Այս գիշեր ես համարձակութիւն առնլու համար գինուոյն չափն անցուցի, բարեկամ, իմ հեւալս ու քրտինքս նորա հետեւանքն է... Դառնանք սեղանատուն:

Չարմանքով կը նկատէր Սուրեն այս կինը, որ Մեսսալին չէր այլեւս իրեն համար, այլ Չենոբիա մ'էր, ո՛ր գիտէ թէ նորա սերունդներէն չէր, վասնզի վերջը պատմութիւնը զինք պիտի յիշէր դիւցազնուհի անուամբ՝ երբ դա՛ այդ կինը մահմեդականութիւնը Ափրիկէի մէջ՝ Կարթէոյնի ափանց վրայ վայրկեան մը պիտի սարսեցներ եւ ընկրկէր:

— Դիմա,— կ'ըսէր Զահինայ,— յայտնեմ քեզ իմ միտքս: — Այս յունաց կայսրերը այնպիսի վատ եղան, որ իրենց հնազանդիլ նախատինք է մարդու. ուստի ես որոշած եմ խումբ մը ընտիր զօրք կազմել, շատ չէ, հազար հոգուոյ, ելնել Ափրիկէի այն կողմերը, ուր լսած եմ թէ նոցայ կարողութիւնը տկարացեալ է եւ ժողովուրդը դժգոհ, հոն խառն գոթացի, յոյն, հին փիւնիկեցի ազգութիւն մը կայ, իմ լեռնականոքս ես դիւրութեամբ կը տիրեմ երկրի մը, ուր ժամանակով իմ ազդես կին մը գնացեր եւ մեծ, զօրաւոր տէրութիւն մը հաստատէր է, եւ այդ բանին համար սկսած եմ աշխատիլ. արդէն ունիմ հինգ-վեց հարիւր երիտասարդ, որ զիս կը սիրեն եւ կը պաշտեն, չորս-հինգ հարիւր մ'էլ կը հասցնեմ, բաւական է: Մնաք բարով կ'ըսեմ այս ափանց եւ կ'երթամ: Բայց աս յիմար ժողովուրդն բոլոր խորհուրդներս կապականէ, ես անունով իշխանուհի եմ, իրենց բուն իշխանքն այդ եպիսկոպոսները, այդ ծերերն են: Երեւակայէ՛, որ անցեալ օր կայսրը հրովարտակ մը դրկէր էր. չեմ հասկնար, հասկնալու էլ միտք չունիմ, հաւատոյ խնդիր մը վերջապէս զօր թիփոյ կ'անուանեն եւ այս ընդունեցէք կ'ըսեն. ես կը հաւատամ թէ յիմար մ'է դրկողը, բայց տասն անգամ աւելի յիմա՛ր չեն այս մեր կրօնականք, որ «Կը մեռէինք, այդ հերետիկոսութիւն է, չենք ընդունիր», պատասխանեցին: Ինձ հասկցնել ուզեցին այնպիսի վերացեալ բաներ, որ խելքս պղտորեցաւ: Իրենց ըսի թէ մենք հազիւ կրնանք մահմեդականաց դեմ այս լեռները պաշտպանել, յոյնք էլ ետեւնուս մեր վրայ եթէ ընկնին մեր վիճակն ի՞նչ կը դառնա: Դարձեալ՝ «Կը մեռնինք չենք կրնար ընդունիլ»,— ըսին: «Մեռէք, քարը գլուխնիդ»,— ըսի ես էլ մտքես, երեսնուն «շատ լաւ կ'ընէք» պատասխանեցի: Ուզածնին գրեցին, դրկեցին Պոլիս, միտքս դրի թէ